

ԿԱՐԵՒՈՐ Ա.ԶԴ

Մամուլի սակ է Յ. ՕՇԱԿԱՆԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ գործին Ա. Հասորը:

Կուսանք քանի մը անհրաժեշտ տեղեկութիւններ ամբողջ աշխատանքին
հանգամանքները նշող: Գործը կը բաղկանայ Հինգ Հասորներէ, իւրաքանչիւրը
մէկէ աւելի գիրքեր պարունակող:

Ա. Հասորը իբր վերնագիր ունի ԶԱՐԹՅՈՒՆԻ ՍԵՐՈՒՆԴ ԵՒ ՌՈՄԱՆԹԻԿՆԵՐ
(Մուտք, Արեւմտահայ Գրականութեան նախապայմանները, մեր քաղաքական,
ընկերային, տնտեսական եւ գրական վիճակներուն ամփոփ ուրուագիծերը.
այդ գրականութեան վրայ Միջիթարեան, Ֆրանսական, Թրքական ազդեցու-
թիւնները. Արեւմտահայ Գրականութեան պատկանութիւնը ընդդէմ զանա-
զան մեղադրանքներու. Հիւրմիւլի, Բագրատունիի հերթողական դիմագիծը,
իրենց լատգոյն էջերուն աշխարհաբար վերածումներով) յետոյ կուգան ԴԵՄ-
ՔԵՐԸ, Տէրոյնց, Միսաքեան, Զօրայեան, Ռուսինեան, Ոսկան, Հիսարեան,
Օսեան, Իզմիրի դպրոցը իր թարգմանութիւններով. Ալիբան, Պէշիկթաշեան
Պ. Դուրեան:

Բ. Հասորը կը պարունակէ ԿՐՏՍԵՐ ՌՈՄԱՆԹԻԿՆԵՐ (Թէրզեան, Սէքեան,
Անէմեան, Պէրպէրեան) եւ ԴԵՊԻ ԻՐԱՊԱՇՏՆԵՐ ոտակուած փաղանգը (Խրիմ-
եան, Սրուանձեանց, Նար-Պէյ, Եղիա, Զեռազ, Մամուրեան, Ծերենց,
Տիկին Տիսաք, Պարոնեան):

Գ. Հասորը նուիրուած է ԻՐԱՊԱՇՏՆԵՐՈՒՆ (Մուտք, Զօհրապ, Կամսարա-
կան, Բաւալեան, Զօպանեան, Հրանդ, Սիպիլ, Հրանդ Ասատուր, Արփիարեան):

Դ. Հասորը կը բովանդակէ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏ ՍԵՐՈՒՆԴԸ (Մուտք, Ե. Դուր-
եան, Դ. Վարուժան, Տիկին Նայեան, Վ. Թէքէեան, — Թորգոմ Սրբազան,
Թլկասինցի, Երուսան, Զարդարեան, Պարթեան, Գեղամ Բարսեղեան —,
Զրաքեան, Սիամանթօ, Սեդրոսեան, Եր. Օսեան, Զէօկիւրեան, Սեւակ, Որբե-
եան, Յարութիւնեան, Մալէգեան, Անտոնեան, Միքայէլ Կիրճեան, Մեծա-
րենց): Այս սերունդին ուսումնասիրութեան շարքը պիտի գրաւէ հաւանաբար
երեք առանձին հասորներ:

Ե. Հասոր՝ ՍՓԻԻԹ (Մուտք, Համաստեղ, Զարեան, Շահան Շահնուր,
Հրաչ Զարդարեան, Օսկան, որոնց դէմքերը գտած են իրենց ամբողջութիւնը:
Սփիւռքէն ուրիշ յատկանշական դէմքեր կը մնան ծրագրային կերպարանքի
մէջ):

Այս ընդարձակ աշխատանքին Ա. Հասորին համար բացուած է բաժա-
նորդագրութիւն: Ամէն օրինակ կ'արժէ 50 Պաղ. դահեկան: Բաժանորդա-

գրողներու յասուկ գին մըն է ասիկա: Լոյս տեսնելէն յետոյ Հասորը պիտի ունենայ աւելի բարձր գին: Միւս Հասորներուն համար չենք կրնար յստակ պայմաններ բանաձեւել:

Արեւմտահայ գրական ճիգը ինչպէս այդ ժողովուրդին իմացական, հոգեկան եւ հաղափական ապրումներուն համագումարը, անոր գրագէտներուն իրագործած գեղեցկութեանց արժէքներուն մթերքը առաջին անգամն է ճիւղ կը դառնան այսօրու լայն աշխատանքի մը: Գերազանցապէս մասնագաւառանքի վայել, անհրաժեշտ գործ մըն է զոր կը յանձնարարենք մեր գրասէրներու ուշադրութեան եւ սիրոյն:

Կը խնդրենք Հայ Մամուլէն որ բարի ըլլայ արտասպիլ ներկայ յայտարարութիւնը:

— Սպասելու մօտ է Յ. Օշականի «Հայ Գրականութիւն» դասագիրքը:
Գինն է 60 Պաղեստինեան Դահեկան:

Ս. ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

ԿԸ Վ.Ա.ՃԱՌՈՒԻ

ՍԱՅԵԱԹ - ՆՈՎԱՅԻ

ՏԱՂԵՐԸ

ՆԵՐԱՇԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՁՈՒԱՐԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

ՊՐՈՑ. ԴՐ. Ռ. ԱՐԲԱՋԱՄԵԱՆԻ

ՏՊԱՐԱՆ «ՄՈԴԵՐՆ», ՅԷԶՐԱՆ, 1943. — էջ 195

Գին՝ 3 Ամերիկ. Տոլար կամ 60 Եգիպտ. Դհիկ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

ՕՐԱՑՈՅՑ

1944

Նախանգ բալին Գրիստոսի

(Ըստ Հին Տոմարի)